Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 23-ի N 851 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության սերտիֆիկացման մարմինների կողմից ոչ պարենային արտադրանքի համապատասխանության հավաստման վերաբերյալ տեղեկատվության տրամադրման պահանջները:

2. Կարգի ընդունման հիմնական նպատակը սպառողների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացումը և պետական վերահսկողություն իրականացնող մարմինների տեղեկացվածության ապահովման գործընթացում միասնական պետական ռազմավարության իրականացումն է:

3. Հայաստանի Հանրապետության սերտիֆիկացման մարմինների կողմից տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը (այսուհետ՝ ազգային մարմին):

4. Հայաստանի Հանրապետության սերտիֆիկացման մարմինը սահմանված պահանջներին ոչ պարենային արտադրանքի անհամապատասխանության դեպքում անհապաղ գրավոր ծանուցում է ազգային մարմնին:

II. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

5. Հայաստանի Հանրապետության սերտիֆիկացման մարմինները մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 10-ը ազգային մարմնին են տրամադրում համապատասխանության հավաստման արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն:

6. Տեղեկատվությունը ներկայացվում է համաձայն ձևի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(հավաստում իրականացնող մարմնի անվանումը, գտնվելու և գործունեության իրականացման վայրը)
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Մ. Մկրտչյան 5
(տեղեկատվությունն ստացող մարմնի անվանումը, գործունեության իրականացման վայրը)

1	2	3	4	5	6	7	8
Արտադրանքի ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Արտադրանքի անվանումը	Արտադրանքի քանակությունը (ծավալը)	Արտադրանքն արտադրողը (երկիրը, անվանումը, գտնվելու կամ գործունեության իրականացման վայրը)	Ներմուծողը (անվանումը)	Արտադրանքի արտադրության և պիտանիության ժամկետները	Արտադրանքի համապատասխանության հավաստման փաստաթղթի անվանումը, համարը, գործողության ժամկետը և տալու ամսաթիվը, պարտադիր հավաստման ենթարկված արտադրանքի խմբաքանակի համարը	Համապատասխանության պարտադիր հավաստման ձևը (համապատասխանության հայտարարագրում կամ սերտիֆիկացում)

Տեղեկատվությունը ներկայացրեց _____ Մարմնի ղեկավարի_____

(ստորագրությունը, ներկայացնելու ամսաթիվը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն) (պաշտոնը, անունը, ազգանունը)

11_0851.doc